

## Արձանագրություն թիվ 2

2021 թվականի փետրվարի 5-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ «Ա» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները , դասղեկ Ն. Հովհաննիսյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զ. Գևորգյանը:

### Օրակարգում

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:
3. Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին.- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ն. Հովհաննիսյանը՝ մեկ առ մեկ ներկայացնելով առարկաները և գնահատականները: Նա նշեց, որ 1-ին կիսամյակում դասարանում գերազանցիկներ չկան: Կան ուսման առաջավորներ.

1. Գալստյան Նարինե Բենիկի
2. Դավթյան Թամարա Սևակի
3. Խաչատրյան Անի Գարիկի
4. Հարությունյան Կատերինա
5. Հովհաննիսյան Մայրանուշ Գևորգի:

Չկան չառաջադիմող աշակերտներ: Բացակայությունը կազմել է 123 ժամ:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, օգնել հետ մնացող աշակերտներին:

2.Լսեցին.- 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:

Ելույթ ունեցավ դասղեկ Ն.Հովհաննիսյանը, ով ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում 10-րդ «Ա» դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2- րդ կիսամյակի անելիքներն ու խնդիրները: Ն.Հովհաննիսյանը առաջարկեց 2-րդ կիսամյակում մեծ ուշադրություն դարձնել կարգապահությանն ու առաջադիմությանը՝ շտկելով նախորդ կիսամյակի սխալները և բացթողումները: Դասղեկ Ն. Հովհաննիսյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների

առաջադիմության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կխթանի սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ճիշտ ու արդյունավետ կազմակերպելուն: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքները, լավ պահել, պահպանել դասագրքերը, մասնավորապես չկորցնել դրանք:

Որոշեցին.- Ծնողները խոստացան հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հաճախակի այցելել դպրոց, կապ հաստատել ուսուցիչների, դասղեկի, տնօրենի հետ:

3.Լսեցին.-Շնթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Ն. Հովհաննիսյանը նշեց ,որ 2-րդ կիսամյակում ևս դպրոցը աշխատելու է վեցօրյա ռեժիմով /9-00--13-55/: Նա հորդորեց ծնողներին հետևել, որ իրենց երեխաներն հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝  Տաթևիկ Աբրահամյան

Քարտուղար՝  Մարիամ Ծառուկյան